«Հաստատում եմ»

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝ Է.Ս.Բարսեղյան

«30» նոյեմբեր 2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Արայի Բաբլոյանի կողմից

«Երիկամի փոխպատվաստման վիրաբուժական առանձնահատկությունները և հիվանդների կյանքի որակը» թեմայով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ԺԴ.00.21 «Ուրոլոգիա» մասնագիտությամբ ներկայացվող թեկնածուական ատենախոսության գիտական և գործնական նշանակության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը

Երիկամների քրոնիկ հիվանդությունը (ԵՔՀ) հանդիսանում է հանրային առողջապահության առաջատար խնդիր ամբողջ աշխարհում: Տերմինալ փուլում գտնվող քրոնիկական երիկամային անբավարարությամբ տառապող հիվանդների թիվը ամբողջ աշխարհում անընդհատ աճում է, և Հայաստանը, ցավոք, բացառություն չէ: Այսպիսով, անցյալ դարի վերջին աշխարհում ավելի քան մեկ միլիոն մարդ ստացել է երիկամի փոխարինող թերապիա հեմոդիալիզի օգնությամբ [Moeller S. et al., 2002]:

Երիկամի փոխարինող թերապիայի (ԵՓԹ) ամենաարդյունավետ տարբերակն է հանդիսանում երիկամի փոխպատվաստումը (ԵՓ) բոլոր առումներով, որը կարող է նպաստել հիվանդների լիարժեք բժշկական և սոցիալական վերականգնմանը, միևնույն ժամանակ երկարացնելով հիվանդների կյանքի տևողությունը և կյանքի որակը (ԿՈ):

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացված տվյալների՝ ՀՀ-ում 2007թ. հեմոդիալիզով հիվանդների թիվը կազմել է 340, իսկ 2019թ. այդ թիվը հասել 983-ի:

Հայաստանում ԵՓ դարաշրջանը սկսվել է անցյալ դարի 80-ական թվականներից՝ առաջին, ցավոք առավելապես հաճախ անհաջող փորձերով: Այսօր ԵՓԹ այս մեթոդը հանդիսանում է սովորական (ռուտին) բուժման մեթոդ: Ցավոք սրտի, մինչ այժմ Հայաստանում իրականացվում է երիկամի փոխպատվաստում բացառապես կենդանի դոնորներից, ինչը զգալիորեն սահմանափակում է թերապիայի այս մեթոդի հնարավորությունները: Այնուամենայնիվ, մինչ օրս կուտակվել է բավարար փորձ ԵՓ արդյունքների ամփոփելու համար, գնահատելու և վերլուծելու իրական ձեռքբերումների և ձախողումների պատճառները, ինչպես նաև ԵՓ ազդեցությունը հիվանդների կյանքի որակի վրա: Այս աշխատանքը նվիրված է վերը նշված կարևոր հարցերին:

Աշխատանքը շատ արդիական է, քանի որ Հայաստանում երիկամի փոխպատվաստման խնդիրները գործնականում լուսաբանված են ոչ բավարար. առկա են եզակի հրապարակումներ, սակայն որոնք չեն արտացոլում տվյալներ երիկամի փոխպատվաստման վիրաբուժական ասպեկտների, ինչպես նաեւ հիվանդների կյանքի որակի վերաբերյալ: Վերոհիշյալի կապակցությամբ տվյալ հետազոտությունը աչքի է ընկնում իր անվերապահ նորությամբ ու նորարարությամբ: Ե՛վ վիրաբուժական բաղադրիչի վերլուծությունը (անոթային անաստոմոզների տարբերակների, առանձնահատկությունների, բարդությունների և այլն), և՛ հիվանդների կյանքի որակի գնահատումը, հատկապես հեմոդիալիզով ԵՓԹ ստացող հիվանդների համեմատությամբ, իրականում մեզ նոր եզակի տվյալներ են ներկայացնում:

Բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում գտնվելով՝ ԵՓ-ն վիրաբուժական տեխնիկայի, վաղ և ուշ վիրաբուժական բարդությունների հետ կապված տարբեր հարցեր Հայաստանում ընդհանրապես ուսումնասիրված չեն: Չնայած կենդանի դոնորներից իրականացված երիկամների փոխպատվաստված հիվանդների ապրելիության բավականին բարձր ցուցանիշներին, պահպանվում են փոխպատվաստված երիկամի վաղաժամ կորուստների մեջ նաեւ ոչ իմունոլոգիական պատճառները [Восканян М.М. и др., 2012]: Դրանց կանխարգելման և բուժման միջոցառումները, մեր կարծիքով, արժանի են մանրակրկիտ ուսումնասիրության:

Հետազոտության և ստացված տվյալների նորարարությունը

Տվյալ աշխատանքում ատենախոսի կողմից առաջին անգամ Հայաստանում վերլուծվել է կենդանի դոնորից երիկամի փոխպատվաստման գրեթե 20-ամյա հայրենական փորձը՝ առաջին հերթին կենտրոնանալով վիրաբուժական ասպեկտներին, ինչպես նաև ռեցիպիենտների կյանքի որակին: Տրված է ներ - և հետվիրահատական բարդությունների վաղ և ուշ արդյունքների գնահատականը և դրանց ազդեցությունը հիվանդների կյանքի և փոխպատվաստված երիկամի ապրելիության վրա: Հետազոտվել է ուղեկցող պաթոլոգիական գործոնների (կոնֆաունդերների) դերը վիրաբուժական բարդությունների զարգացման և նրանց հետևանքների վրա:

Ատենախոսության մեջ առաջին անգամ իրականացվել է ռեցիպիենտների կյանքի որակի վերլուծություն, իրականացվել է համեմատական գնահատում ծրագրային հեմոդիալիզ ստացող հիվանդների կյանքի որակի հետ: Հայտնաբերվել են նաև երիկամի փոխպատվաստումից հետո ռեցիպիենտների կյանքի որակի վրա ազդող գործոններ (հիմնականում դրա վիրաբուժական բաղադրիչի):

Հեղինակի կողմից ստացված արդյունքների գիտական և գործնական կարևորությունը

Ներկայումս տարեկան Հայաստանում կատարվում է երիկամի փոխպատվաստման միջինում 15 վիրահատություն: Վերջին գրեթե 20 տարիների ընթացքում կուտակվել է բավականաչափ թվով դիտարկումներ, ինչը թույլ է տալիս ամփոփել և նկարագրել մեր փորձը բնութագրող առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Սույն ատենախոսական աշխատությունը նվիրված է երիկամների փոխպատվաստման տարբեր հիմնախնդիրներին, որոնք միավորված են հիմնական վիրաբուժական ասպեկտի շուրջ: Հաջողությամբ իրականացված վիրահատությունը հաջողության հասնելու առաջին քայլն է, և հիմնականում հենց այս միջամտությունից է կախված իրադարձությունների հետագա ընթացքը և հիվանդի վիճակը երկարաժամկետ հեռանկարում:

Անցած 2 տասնամյակների ընթացքում մեծ աշխատանք է կատարվել Հայաստանում երիկամի փոխպատվաստման ծրագրի անխափան գործունեությունը հաստատելու և հետագայում ապահովելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ փոքր թվով վիրահատությունները չեն կարող կանգնեցնել այս տեսակի թերապիա պահանջող հիվանդների թվի էքսպոնենցիալ աճը: Անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր միջոցներ, որոնց թվում այս փուլում ամենահիրատեսականը կենդանի դոնորներից երիկամի փոխպատվաստման թվի զգալի ավելացումն է, ինչպես նաև դիակային դոնորներից ԵՓ ծրագրի ստեղծումը:

«Եզրակացություն» գլխում հեղինակը հետևողականորեն ներկայացրել և գիտականորեն հիմնավորել է հետազոտության արդյունքները: Վերլուծությունից տրամաբանորեն բխում են եզրակացություններ (4) և գործնական առաջարկություններ (3), որոնց հավաստիությունը հիմնավորված է: Ընդհանուր առմամբ, աշխատանքը թողնում է լավ տպավորություն և հեշտ ընթեռնելի է:

Հետազոտության արդյունքնում ստացված տվյալները իրականում ունեն մեծ գործնական նշանակություն և կարող են հիմք հանդիսանալ ազգային արձանագրությունների ստեղծման համար:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումների բնութագիրը

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 8 գիտական աշխատանք, որից 4-ը՝ օտարերկրյա, 4-ը՝ կենտրոնական ամսագրերում, որոնք ներառված են Բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի կողմից առաջարկված՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչման հայցորդների ատենախոսությունների հիմնական արդյունքների հրատարակման համար առաջարկվող ամսագրերի ցուցակում: Օտարերկյան ամսագրերից մեկում («Ուրոլոգիա», ՌԴ («Урология», Москва, РФ)) ատենախոսը հանդիսանում է որպես տպագրված հոդվածի միակ հեղինակ: Մի այլ հոդված տպագրվել է մեծ հեղինակություն ունեցող «Annals of Transplantation» ամսագրում (ԱՄՆ), որն ունի 1.53 ազդեցության գործակից (Impact factor): Հրապարակումներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսական աշխատանքի բովանդակությունը:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածք

Ատենախոսական աշխատանքը կառուցված է դասական տիպի վրա, ներկայացված է համակարգչային տեքստով 140 էջի վրա, կազմված է ներածությունից, գրական ակնարկից, նյութերի և մեթոդների գլխից, սեփական հետազոտության 4 գլուխներից, եզրակացությունից, · եզրահանգումներից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից, որ ներառում է 144 աղբյուր, պատկերազարդված է 32 նկարներով և 53 աղյուսակներով:

Եզրահանգում

Սերգեյ Արայի Բաբլոյանի ատենախոսական աշխատանքը քննարկվել է «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Գիտական խորհրդի թիվ 2 նիստում «30» նոյեմբերի 2021թ. :

Պաշտոնական գրախոս՝ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Ուրոլոգիայի բաժանմունքի վարիչ բ.գ.թ., դոցենտ Վարուժան Հայկի Շահսուվարյան,

Խորհրդի նախագահ՝ Ստեփանյան Սուրեն Ա. - Ընդհանուր վիրաբուժության կլինիկայի ղեկավար, ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.դ.պրոֆեսոր,

Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ջնդոյան Զինաիդա Տ. - Ընդհանուր թերապիայի կլինիկայի ղեկավար, ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ.,

Գիտ.քարտուղար՝ Էնֆենջյան Արմենակ Կ. - Կոլոպրոկտոլոգիայի բաժանմունքի վարիչ բ.գ.թ. դոցենտ,

Խորհրդի անդամներ՝ Ղազարյան Արա Ա. - Բժշկական տնօրեն՝ անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,

Սուլթանյան Տիգրան Լ. - Սիրտ-անոթային վիրաբուժ. կլինիկայի ղեկավար, բ.գ.դ. պրոֆեսոր,

Շահսուվարյան Վարուժան Հ. - Ուրոլոգիայի բաժանմունքի վարիչ բ.գ.թ. դոցենտ,

Սարկավագյան Հովհաննես Կ. - Թորակալ վիրաբուժ. կլինիկայի ղեկավար, կրծքային վիրաբուժության ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ,

Հակոբյան Գագիկ Ս. - Գաստրոէնտերոլոգիայի և հեպատ. Կլինիկայի ղեկավար ներքին հիվանդությունների, գաստրոէնթերոլոգիայի և հեպատոլոգիա ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ,

Մինասյան Արմինե Մ. - Ընդհանուր թերապևտ, ներքին հիվանդությունների, պուլմոնոլոգիա,նեֆրոլոգիա, ամբիոնի վարիչ, բ.գ.դ.պրոֆեսոր,

Պողոսյան Արմինե Հ. - Դիագնոստիկ-լաբ. ծառայության ղեկավար,

Գևորգյան Զարուհի Հ. - Լաբորատոր բաժնի վարիչ, լաբորատոր-ախտորոշման ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ,

Ասոյան Վիգեն Ա. - Ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ,

Խաչատրյան Փառանձեմ Ս. - Համալսարանական կլինիկաների լաբորատորիաների ղեկավար, պաթոլոգիայի հետդիպլոմային կրթության ամբիոնի վարիչ, բ.գ.թ.,

Աղամալյան Հայկ Հ. - Սպորտային վիրաբուժության և արթրոսկոպիայի բաժանմունքի վարիչ բ.գ.թ.,

Պապիկյան Արթուր Վ. - Դիմա-ծնոտային վիրաբուժության կլինիկայի ղեկավար, դիմա-ծնոտային վիրաբուժ. և ստոմատոլոգիայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,

Միրաքյան Գարեգին . - Քիթ-կոկորդ-ականջաբանական վիրաբուժության կլինիկայի ղեկավար, Քիթ-կոկորդ-ականջաբանական ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,

Մելքոնյան Դավիթ Լ. - Բժիշկների հետդիպլոմային կրթության անեսթեզիոլոգիայի և ռեանիմացիայի ամբիոնի բ.գ.դ., պրոֆեսոր:

Նիստին ներկա էին խորհրդի անդամների 17-ից 16-ը:

Քննադատական դիտողություններ

Ատենախոսությունը լավ է ձևավորված, հստակ պատկերազարդված է և չի պարունակում ավելորդ տեղեկատվություն:

Ատենախոսական աշխատանքի գրախոսության ընթացքում լուրջ դիտողություններ չեղան: Ոճական և ուղղագրական սխալները, որոնք առկա են աննշան

քանակությամբ, չեն խեղաթյուրում ներկայացված նյութի իմաստը և չեն ազդում աշխատանքի ընկալման ամբողջականության վրա:

Այսպիսով, «Երիկամի փոխպատվաստման վիրաբուժական առանձնահատկությունները և հիվանդների կյանքի որակը» թեմայով ԺԴ.00.21 մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման Սերգեյ Արայի Բաբլոյանի ատենախոսական աշխատանքը ավարտված գիտական աշխատանք է, որում հեղինակի կողմից առաջադրված տեսական դրույթներն ու գործնական առաջարկությունները, ամբողջությամբ կարող են որակվել որպես գիտական նվաճում ժամանակակից ուրոլոգիայի զարգացման գործում:

Ներկայացված ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել և միաձայն հավանության է արժանացել «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի 2021թ. նոյեմբերի 30-ի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 2):

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ
Ուրոլոգիայի բաժանմունքի վարիչ՝
բ.գ.թ. դոցենտ՝ Վ.Հ. Շահսուվարյան

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ Ընդհանուր
վիրաբուժության կլինիկայի ղեկավար,
ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ,
բ.գ.դ. պրոֆեսոր՝ Ս.Ա.Ստեփանյան

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ
Կոլոպրոկտոլոգիայի բաժանմունքի վարիչ,
Գիտ.քարտուղար, բ.գ.թ. դոցենտ՝ Ա.Կ.Էնֆենջյան